ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Չարենցավանի համայնքապետարանը ստորև ներկայացնում է իր կարիքների համար **գրավոր թարգմանության ծառայությունների** ձեռքբերման նպատակով կազմակերպված **«ՉՀ-ՄԱԾՁԲ-2025/4»** ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում **2024 թվականի նոյեմբերի 13-ին** կնքված **N «ՉՀ-ՄԱԾՁԲ-2025/4»** պայմանագրում **2025 թվականի հունվարի 20-ին** կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ: Պայմանագրով սահմանվել է, որ ծառայությունների մատուցումն իրականացվելու է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու և կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքվելու դեպքում:

Փոփոխության նկարագրություն: Ծառայությունների մատուցումն իրականացվելու նպատակով նախատեսվել են համապատասխան ֆինանսական միջոցներ և կողմերի միջև կնքվել է համապատասխան համաձայնագիր:

Փոփոխության հիմնավորում: Համապատասխան ֆինանսական միջոցների առկայություն, **13.11.2024թ. կնքված N «ՉՀ-ՄԱԾՁԲ-2025/4»** գնման պայմանագրի 7.5-րդ և 7.13-րդ կետեր, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետ:

Պատվիրատու՝ **Չարենցավանի համայնքապետարան**